# ՍԱՆԱՀՆԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

### 1. Ամ մուտքի ճակատակալ քարի վրա դրսից, այժմ մնացել է եկեղեցուն կից շինած մեծ գավթի պատի տակ: Դժվարությամբ կարդացինք միայն այսքանը

*ԺԱ դարի առաջին կես*

Հրատարակվում է առաջին անգամ

*Յաւ[ուր]ս ա[մենա]գ-*
*աւր արքայի[ն] ... ես Աբլխ-*
*արիփ Հայոց մարզպա[ն որդի] Գրիգոր*
*իշխանի, որդո Ապո[ւղամրի], յազգէ Պալհաւ-*
*ունի, ի տանէ Ա(ր)շակունեաց մեծ յ[ոյսով] յորդո*
*—— ընծա մատուցի մեծանուն ուխտի Սանահնի-*
*ս Ծ դահէկան և ... Թ գան...։*
*էն ընկալան սիրով և գրեցին ինձ յիշատակ յ-*
*աւխտէնից Բ աւր ամ ըստ ամէ զատւն Պէտրոսի և*
*Պաւղոսի, զՈհաննու և Յակոբու ամէնայն եկեղեց-*
*իքս, որչափ եկեղէցիքս ի շինութեն էն...*

Ծանոթություն.— *1. Այս տաճարի ամ մուտքը հետագայում լայնացրել և ցածրացրել են։ Արձանագրության շարունակությունը մնացել է մուտքի նոր ձևավորված մասերի տակ։*

*2. Քարը տեղ-տեղ փշրված և մաշված է։ Ամենից վատ կարդացվում են 1-ին, 2-րդ, 4-րդ և մանավանդ 7-րդ տողերը։ Մնացածն էլ դժվարությամբ է կարդացվում։*

*3. Երկրորդ տողում* արքայի *բառից հետո կարծեք թե հնարավոր է կարդալ* Սմբատ(ա)յ *կամ* Սնպատ(ա)յ *անունը, որ խիստ հարմար է նկատի առնելով այս նույն* Այլխարիպի *(Աբլխարիպի) Անիում, Մարմաշենում, Հախ-*



393—7